

վակիմ Արքեպիսկոպոս հետեւեալ վկայականը սուած էր.

“Ես յովակիմ արքեպիսկոպոս Էջմիածնայ այս վերոյ գրեալն կու հաստատեմ, այս իմ ձեռագրգիրս է:

Երանելի Հայր. զսրբազան եկեղեցւոյ սովորութիւնսն, եւ զկարգադրութիւնսն համահետեւելով վարկեմ գոլ արժան, եւ իրաւ զի սրբութիւն քո կարգեսցէ զերանելի փիօ՛ քուինթն ի կարգս սրբոց. զիւր շնորհալութիւնս եւ զիւր հրաշքն են չափաւոր փորձած որ որչափ որ հարկաւոր է, ի յայս դատաստանումն. եւ այս պարտ է որ երեւի ի համարս սրբոց, մէկ որ ի ժամանակի ո՛չ անձանօթ ի մեղանէ էր գլուխ երեւելի այս եւ այնմ եկեղեցւոյ:”

Գարձեալ 1714ին ի Հոռմ, Propagandaի տպարանին մէջ տպուած Վիլլոդի “Մեկնիչ Սրբոյ Աւետարանին”, գրքին վկայութիւն գրած է, արդէն անշուշտ 1713ի սկիզբները, քանի որ տպագրութեան վերջին հրամանը 7 Յունիս 1713ին ստորագրուած է Յիսուսեանց Աբբասօրէն: Ահաւասիկ սոյն վկայականի բնագիրը.

“Վկայութիւն Յովակիմ վարդապետի Զուղայեցւոյ Արհեպիսկոպոսի:” ուղղուած առ Ս. Ժողովն ի Հո.

“Երիցս երջանիկ տիրացդ, եւ գերահռչակ վեհափառացդ, մեծաշուք, եւ յարգոյապատիւ սրբազան հարցդ հասարակաց սուրբ Ժողովդ ողջոյն, եւ երկիրպագութիւն ժառուցանեմ վերոյ գումարեալ պատուական Տերանցդ: Յայտ առնեմ վսեմախօհիցդ, որ ընթերցայ լաւ մտադրութեամբ զՄեկնիչ սրբոյ Աւետարանին, որ է շարագրեալ ի